ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
քարտուղարության ղեկավար
պարոն Տիգրան Մարտիրոսյանին

Նույն աշխատակազմի Միջազգային
համագործակցության վարչության պետ
Միքայել Խաչատրյանից

**Զեկուցագիր**

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Տեղեկացնում եմ, որ սույն թվականի հուլիս ամսին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ընդունելու է Խոշտանգումների Զոհերի Միջազգային Խորհրդի (IRCT) և Արցախի Հանրապետությունից եկած հատուկ պատվիրակության անդամներին՝ «Ապօրինի մահվան հավանական դեպքերի քննության մասին Մինեսոտայի արձանագրության» թեմայի ներքո քննարկումներ իրականացնելու նպատակով: Քննարկումներին մասնակցելու են նաև Փորձաքննությունների ազգային բյուրոյի և «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի դատաբժիշկներ: Քննարկումները տևելու են 2 օր:

Վերը նշված քննարկումների կազմակերպման համար անհրաժեշտ է ձեռք բերել համաժամանակյա թարգմանության և թարգմանչական սարքավորումների վարձակալության ծառայություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ Ձեր համապատասխան կարգադրությունը:

*Միքայել Խաչատրյան*

05.07.2017թ.